

Հարցում

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Առարկայական օլիմպիադաների մեծ մասի դպրոցական փուլն անց է կացվում թեստերի միջոցով: Մրցույթի մասնակիցները պետք է 4 պատասխաններից ընտրեն միակ ճիշտ պատասխանը: Մրցույթի ժյուրին հարցաթերթիկում պատրաստել է m հարց: Մրցույթին մասնակցել են n դպրոցականներ: Յուրաքանչյուր հարցին դպրոցականները պատասխանել են a, b, c, d տառերից մեկով: Ժյուրին վստահ է, որ դպրոցականները լավ են պատրաստվել և բոլոր հարցերին մեծ մասը տվել է ճիշտ պատասխաններ: Հաշվի առնելով այդ հանգամանքը, դուք պետք է գրեք ծրագիր, որը հաշվում է մրցույթի մասնակիցներից յուրաքանչյուրի միավորը, յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են մրցույթի մասնակիցների n ($3 \leq n \leq 100$) քանակը և հարցերի m ($1 \leq m \leq 100$) քանակը: Հաջորդ n տողերից յուրաքանչյուրում տրված է m սիմվոլ՝ a, b, c կամ d : Երաշխավորվում է, որ յուրաքանչյուր սյունում սիմվոլներից ճիշտ մեկը մյուսներից շատ է հանդիպում: Դա ճիշտ պատասխանն է:

Ելքային տվյալներ

Պետք է արտածել n թիվ՝ մասնակիցներից յուրաքանչյուրի միավորը պահպանելով մուտքային տվյալների հերթականությունը:

Օրինակ

Մուտք	Ելք
5 4	2
abcd	3
acab	2
aaaa	1
bcbc	3
dcad	